ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

ՁԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ



ԵՐԵՎԱՆ 2009

ՀՏԴ 378 : 001 : 06
ԳՄԴ 74.58 + 72
Գ 602

Զեկուցումների հիմնադրույթներ
Հրատարակվում է ԱրՊՀ գիտխորհրդի որոշմամբ

Գիտաժողովի կազմկոմիտե

Վահրամ Բալայան - ԱրՊՀ գիտ. աշխատանքների գծով պրոռեկտոր
Արմեն Սարգսյան - Բանասիրական ֆակուլտետի դեկան
Արզիկ Մխիթարյան – Հումանիտար ֆակուլտետի դեկան
Ռուզաննա Մանգասարյան – Տնտեսա–իրավաբանական ֆակուլտետի դեկան
Վոլոդյա Միրզոյան- Քիմիա–կենսաբանական ֆակուլտետի դեկան
Գեորգի Սահակյան – Ֆիզմաթ. ֆակուլտետի դեկան
Արթուր Թովմասյան – Ճարտարագիտական ֆակուլտետի դեկան

Գ 602 Գիտական ընթերցումներ:
Զեկուցումների հիմնադրույթներ 20-21 ապրիլի, 2009 թ.- Եր.:
Զանգակ-97, 2009.-160 էջ:

Ժողովածուի մեջ նշված են տարբեր մասնագիտությունների գծով ԱրՊՀ դասախոսների և ուսանողների գիտական զեկուցումների հիմնադրույթները:

ԳՄԴ 74.58+72

ISBN 978-99941-1-635-5

ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու և քաղաքացու խախտված իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը: Մարդու իրավունքների պաշտպանին նշանակում է ԱԺ 6 տարի ժամկետով, պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն 3/5-ով:

3. Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը ԼՂՀ-ում դեռևս գտնվում է սկզբնական ձևավորման փուլում: Սկսած 2008թ. մայիսի 20-ից մինչև դեկտեմբերի 30-ը՝ պաշտպանի գրասենյակ մուտքագրվել է կոլեկտիվ ու միանձնյա 196 գրավոր ու բանավոր դիմումներ, որոնցից յուրաքանչյուրը արժանացել է համապատասխան արձագանքի: ԼՂՀ-ում այս ինստիտուտի գործունեության արդյունավետության պայմաններից մեկը կարելի է համարել բարյացակամ և փոխըմբռնման մթնոլորտի առկայությունը իշխանության թևերի հետ: Զարգացած ժողովրդավարական պետությունների փորձը ցույց է տալիս, որ պետական իրավապաշտպան ինստիտուտը առավել էֆեկտիվ կարող է լինել միայն նրա ճիշտ գործածության դեպքում: Դրան հասնելու բանալին կախված է քաղաքացիական հասարակության ակտիվության ու հասունության աստիճանից:

4. Պետք է նշել, որ ԼՂՀ-ում ՄԻՊ ինստիտուտը դեռևս մի խորթ մարմին է հասարակության, պետության, տեղական ինքնակառավարման մարմինների համար: Ոմանք այն ընդունում են որպես ամենակարող իշխանական ատյան, ոմանք էլ հակառակը՝ որպես պետական մեքենայի ձևական ատրիբուտ: Մյուս կողմից էլ՝ կա իրավունքների բարելավման միտում և քաղաքական կամք, իրողություն է նաև սահմանադրության ընդունումը, սակայն շարքային քաղաքացիները պետք է գիտակցեն, որ մարդու իրավունքները երկրում բարձրագույն արժեք են, և որ մարդու իրավունքների առաջին պաշտպանը ինքը՝ քաղաքացին է, հետո նոր պաշտպանության մյուս ինստիտուտները: Որքան հասարակությունը ակտիվ է պայքարում իր իրավունքների համար, այնքան իշխանությունը հաշվի է նստում նրա հետ և միայն այս դեպքում կարելի է ակնկալել հակակշիռների համակարգի ռեալ գործում, երբ իրոք կլինի շուկայական տնտեսություն, իշխանությունների իրական բաժանում, արդյունքում ինքնաբերաբար կլուծվեն բոլոր խնդիրները:

Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Ի.- 1-ին կուրսի մագիստրանտ

ԼՂՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թեման նվիրված է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ատրիբուտներից մեկի՝ Սահմանադրության արժեբանական առանձնահատկություննե-

ին, որի ընդունման կարևորության և նրանում պարունակվող սահմանադրական որոշ արժեքների մասին էլ փորձ կարվի խոսել այս թեմայի շրջանակներում, հատկապես այնպիսի արժեքների մասին, ինչպիսիք են ինքնիշխանությունը, ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետությունը, իշխանությունների բաժանումը և հավասարակշռումը, տեղական ինքնակառավարումը, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ճանաչումը, տնտեսական գործունեության ազատությունը, գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցությունը և այլն:

Սրանք այն արժեքներն են, առանց որոնց հնարավոր չէ պատկերացնել ժամանակակից որևէ հասարակություն, պետություն, ինչպես նաև Սահմանադրություն:

Քանի որ մեր ուսումնասիրության թեման առնչվում է աքսիոլոգիային (արժեքանությանը), ուստի նպատակահարմար կլինի պարզաբանել դրա բովանդակությունը: «Աքսիոլոգիա» բառն առաջացել է հունարեն **axia-արժեք** և **logos-ուսմունք** բառերից, այսինքն՝ **«ուսմունք արժեքների մասին»**: Ի սկզբանե աքսիոլոգիան ձևավորվել է որպես փիլիսոփայական ուսմունք, իսկ ժամանակի ընթացքում այն կարևոր նշանակություն է ձեռք բերել նաև իրավագիտության ոլորտում: Ըստ փիլիսոփայական բառարանի բնորոշման՝ արժեքանությունը արժեքների էության փիլիսոփայական հետազոտությունն է [5, 41-42 էջեր], իսկ մեր բառերով՝ արժեքը առարկայի կամ երևույթի հատկությունն է, որով բացահայտվում է նրանց դրական կամ բացասական նշանակությունը մարդու կամ հասարակության համար:

Սահմանադրության մեջ պարունակվող սահմանադրական արժեքները թե՛ պետության և թե՛ մարդու համար ունեն անսահման նշանակություն: Սահմանադրական արժեքների միջոցով է բացահայտվում պետության ներկայացվելիությունը այլ երկրներում, նրա ներքին կառուցվածքը, կառավարման ձևը, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների շրջանակն ու պաշտպանվածության աստիճանը և այլն, որոնց զգալի մասն ուղղակի թե անուղղակի վերաբերում կամ առնչվում են հենց մարդուն:

Ժամանակակից սահմանադրականության մեջ արժեքների բացառիկությունը դրսևորվում է երկու հիմնական չափանիշներում՝

1. ինքնին սահմանադրությունը որպես արժեք
2. Սահմանադրության պրեամբուլայում /նախաբանում/, նորմերում և ինստիտուտներում անմիջական ամրագրում ստացած արժեքներ:

Խտացված ձևով ԼՂՀ Սահմանադրության արժեքները շարադրված են նրա առաջին գլխում, որոնք սահմանում են ԼՂՀ սահմանադրական կարգի հիմունքները: Դրանց թվին են պատկանում, մասնավորապես, պետության

ինքնիշխանությունը (հոդ.1, մաս 1), ժողովրդավարությունը (հոդ.1, մաս 1), իրավական և սոցիալական պետությունը (հոդ.1, մաս 1), մարդու հիմնական իրավունքների ու ազատությունների ճանաչումը՝ որպես անօտարելի ու բարձրագույն արժեքներ, ազատության, արդարության և խաղաղության հիմք (հոդ.2), մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը պետության կողմից (հոդ.5), իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը (հոդ.6, մաս 1), գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցությունը (հոդ.8, մաս 1), տնտեսական գործունեության ազատությունը և ազատ տնտեսական մրցակցությունը (հոդ.9, մաս 1), սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացումը և հավասար իրավական պաշտպանությունը պետության կողմից (հոդ.9, մաս 4), տեղական ինքնակառավարումը (հոդ.13), ինչպես նաև բոլորի հավասարությունը օրենքի առջև (հոդ. 25, մաս 1), արդարությունը և այլն [1,3-7 էջեր]:

Ուսումնասիրելով և փորձ կատարելով վերլուծել ԼՂՀ Սահմանադրությունը՝ նրա արժեբանական տեսանկյունից, պետք է փաստել հետևյալը. ժամանակակից հասարակարգում սահմանադրությունը մի կողմից պետք է լինի իրական, արտացոլի գործող արժեքները և հասարակության ու պետության մեջ ձևավորված հարաբերությունները՝ ապահովելով պատմական զարգացման հաջորդականությունը: Մյուս կողմից, Սահմանադրությունը հասարակությանը պետք է առաջարկի նպատակներ և իդեալներ, համակարգային դրույթներ, ուրվագծել հասարակության և պետության զարգացման կողմնորոշիչները, նրա հեռանկարները: Այլ խոսքերով, Սահմանադրությունը պարտավոր է մեկտեղել հասարակության արժեքները, օգնել նրա արժեքային զարգացմանը և միաժամանակ պաշտպանել այդ արժեքները: Այս տեսանկյունից ԼՂՀ Սահմանադրության տեքստը պարունակում է քաղաքակիրթ աշխարհում ընդունված բազմաթիվ արժեքներ և նախանշում այն անելիքները, որոնք տեսականը կդարձնեն գործնական: Այստեղից էլ կարող է հարց առաջանալ. արդյո՞ք այդ արժեքներն ու սկզբունքներն իրենց հետագա զարգացումն են գտել օրենսդրությունում, իրագործվա՞ծ են արդյոք այդ նորմերը գործնականում, հասե՞լ են արդյոք առաջադրված նպատակներին: Այլ խոսքերով, շատ կարևոր է համատեղել իրավաբանական և փաստացի սահմանադրությունները:

Ռազմելա ԱՎԱՆԵՍՅԱՆ
ԱԼԳՈՐԻԹՄԸ ՈՐՊԵՍ ԱԼԳՈՐԻԹՄԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄՈԴԵԼ..... 130
Гурген ДЖАМАЛЯН
КВАНТОВАЯ ТОЧКА С ГИПЕРБОЛИЧЕСКИМ ОГРАНИЧИВАЮЩИМ ПОТЕНЦИАЛОМ В КВАНТУЮЩЕМ МАГНИТНОМ ПОЛЕ..... 131
Կարինե ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՈՉ ԼՐԻՎ ԻՆԴՈՒԿՑԻԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ..... 132
Մարինե ԲԱԲԱՅԱՆ
ՄԻՋԻՆՆԵՐԻ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆԸ: ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ, ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 134

Լուսինե ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
ՄԱԿԵՐԵՎՈՒՅԹԻ ՎՐԱ ՉԵԲԻՇԵՎՅԱՆ ՑԱՆՑԵՐ..... 136
Շուշան ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
ՄԵԴԻԱԼ ՔՎԱՋԻԽՄԲԵՐ..... 138
Գայանե ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱՆԻԶՈՏՐՈՊ ՍԱԼԻ ՄԻ ԽԱՌԸ ԵԶՐԱՅԻՆ ԽՆԴՐԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՇԵՐՏԻ ՏԻՊԻ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ..... 139

ԻՐԱՎՈՒՆՔ

Гариб БАБАЯН
ПРОСТРАНСТВЕННО-ВРЕМЕННАЯ ТРАНСФОРМАЦИЯ НЕКОТОРЫХ НОРМ И ПРИНЦИПОВ МЕЖДУНАРОДНОГО ПРАВА..... 141
Рита АРУСТАМЯН
ФОРМИРОВАНИЕ ПРАВОВОЙ КУЛЬТУРЫ ГРАЖДАНСКОГО ОБЩЕСТВА..... 142
Հասմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ..... 144
Տաթև ԶԱՔԱՐՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԼՂՀ-ՈՒՄ..... 145
Ավետիք ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԼՂՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՔԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ..... 146

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Լուսինե ՇԱՀԲԱՐՅԱՆ
ԼՂՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ..... 149
Անի ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՄԱՐՔԵԹԻՆԳ-ՄԻՔՍԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆՈՒՄ..... 150
Самвел ЛАЗАРЯН
ЧТО ДОЛЖНО ДЕЛАТЬ ПРАВИТЕЛЬСТВО ДЛЯ ОБЕСПЕЧЕНИЯ РАЗВИТИЯ ЭКОНОМИКИ В УСЛОВИЯХ КРИЗИСА..... 152